# ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

## ՈՎԿԻԱՆԻԱ



*Բնակիչ Նոր Կուինէայի.*

*Նոր Կուինէա կամ Բաբուա մեծ կղզի մըն է Նոր Հոլանտայի հիւսիսային կողմը. 4,000 քառակուսի փարսախ տարածութիւն ունի։ Նախ փորթուգալ-*

10219365





ցիք ԺԶ դարուն գտեր էին այս կղզին, և քիչ մը ետքը սպանիացիք անունը դրին Նոր Կուինէա։ Երկիրը ընդհանրապէս լեռնոտ է և անտառներով լեցուն. կլիման բարեխառն է։

Կղզւոյն բնակիչքը երկու ցեղ կը բաժնուին, Բաբուայք ըսուածները աւելի կրթուածներն են և երկրին եզերքը կը բնակին. տուներնին ծովեզերքը կը շինեն ցցերու վրայ։ Կտրիճ պատերազմող են. կղզւոյն մէջերը և անտառները կը բնակին Հարաֆորա ցեղին բարբարոսները. բոլոր բնակչաց թիւը երկու հարիւր հազար կը սեպուի և հոլանտացւոց իշխանութեան տակն են։